«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ.Քոչարյան
9 մարտի 2005թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

17 փետրվարի 2005թ. N 188-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արխիվային գործի մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հարապետության արխիվային հավաքածուի պահպանության ֆինանսավորման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սկսած 2006 թվականից Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները, պետական հիմնարկները և կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերը ծրագրավորելիս միջոցներ են նախատեսում նախորդ տարիների փաստաթղթերի արխիվացման, իսկ սկսած 2007 թվականից՝ նախորդ տարվա փաստաթղթերի արխիվացման համար՝ ներառելով փաստաթղթաշրջանառության ծավալը:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարներին և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեն ծրագրավորելիս նախատեսել միջոցներ նախորդ տարիների, իսկ 2007 թվականից՝ նախորդ տարվա փաստաթղթերի արխիվացման համար:

4. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ ելնելով գործառույթների առանձնահատկություններից, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեն ծրագրավորելիս նախատեսել միջոցներ դատական իշխանության մարմինների նախորդ տարիների, իսկ 2007 թվականից՝ նախորդ տարվա արխիվային փաստաթղթերի արխիվացման համար:

5. Սահմանել, որ սյուն որոշման 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հատկացումների հաշվին գնումներն իրականացվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

6. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության պետին ու Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարին՝ համատեղ քննարկել «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության հրդեհային պահպանությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության պետական հակահրդեհային ծառայության կողմից՝ պետության անունից իրականացնելու հնարավորության հարցը և սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել համապատասխան առաջարկություն:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ **Ա.Մարգարյան**

2005թ. փետրվարի 28

Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2005 թվականի
փետրվարի 17-ի N188-Ն որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի (այսուհետ՝ արխիվային հավաքածու) պահպանության ֆինանսավորումն իրականացվում է արխիվային հավաքածուի պահպանումն իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների ու պետական արխիվների միջոցով:

2. Պետական արխիվների միջոցները գոյանում են ի հաշիվ

ա) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին հատկացվող սուբսիդիայից.

բ) միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի միջոցներից.

գ) պայմանագրային հիմունքներով իրավաբանական և ֆիզիկական անձանց մատուցված ծառայությունների դիմաց վճարներից.

դ) նվիրատվություններից և այլն:

3. Պետական արխիվների գործունեության համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին սուբսիդիան հատկացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի

Ղեկավար-նախարար **Մ.Թոփուզյան**